ՀՏԴ:929:891.981.09 Հախվերդյան + 7(479.25)
Doi:10.54503/0135-0536-2025.1-325

ԵՐԻՏԱՍԱՐԴ ՀԱՅ ԱՐՎԵՍՏԱԲԱՆՆԵՐԻ ԳԻՏԱԿԱՆ ՏԱՍՆՅՈԹԵՐՈՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԸ՝ ՆՎԻՐՎԱԾ ԼԵՎՈՆ ՀԱԽՎԵՐԴՅԱՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ*

ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի (ԱԻ) նախաձեռնությամբ 2024 թ. դեկտեմբերի 18–19-ը գումարվեց Երիտասարդ հայ արվեստաբանների գիտական տասնյոթերորդ նստաշրջանը: Բացումը և լիագումար նիստերը տեղի ունեցան դեկտեմբերի 18-ին՝ ԳԱԱ նախագահության նիստերի դահլիճում, իսկ նիստերը՝ դեկտեմբերի 19-ին, ԳԱԱ պատմության ինստիտուտի նիստերի դահլիճում: Նստաշրջանը նվիրվեց Արվեստի ինստիտուտի նախկին տնօրեն (1987–2003 թթ.), ՀԽՍՀ արվեստի վաստակավոր գործիչ, ՀԽՍՀ Պետական մրցանակի դափնեկիր, ԳԱԱ ակադեմիկոս Լևոն Հովհաննեսի Հախվերդյանի ծննդյան 100-ամյա հոբելյանին:

Բացման խոսքով հանդես եկավ ԱԻ տնօրեն, արվ. դ., պրոֆ., ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ Աննա Ասատրյանը: *«Լևոն Հախվերդյանը մեծ տեղ էր հատկացնում երիտասարդներին, ճանապարհ հարթում նրանց համար: Նա գիտեր, որ մեր ապագան մեր երիտասարդներն են: Այսօրվա միջոցառումը նվիրված է Հախվերդյանի վաստակի արժևորմանը», – ասաց նա: Ողջույնի խոսքով հանդես եկավ ԳԱԱ հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար, ակադեմիկոս* Յուրի Սուվարյանը: *Նա շեշտեց Լ. Հախվերդյանի մեծ վաստակը թատերագիտության, գրականագիտության, լեզվաբանության ոլորտներում. «Թեև նա ավելի շատ արվեստագետ էր, գրականագետ էր, բայց ժամանակի լավագույն լեզվաբանների հետ հավասար պայքարում էր մեր լեզվի անաղարտության համար, որ մեր լեզուն ունենա քերականական անթերի լուծումներ, այն հարստանա նոր ճշգրիտ տերմիններով: Նրա կատարած գործը և եռանդը պետք է ոգևորի այսօրվա հետազոտողներին»: Հայաստանի թատերական գործիչների միության նախագահ* Հավոր Ղազանչյանը *նշեց. «Մեր սերունդը երջանիկ սերունդներից է, մենք առիթ ունեցանք շփվելու բազմաթիվ մեծերի՝ մեծ դրամատուրգների, մեծ թատերագետների հետ, մարդկանց հետ, ովքեր դեռ այն ժամանակ կենդանի դասականներ էին: Այդ շարքում էր նաև Լևոն Հախվերդյանը: Բացառիկ անձնավորություն էր: Հույս ունեմ, որ մեր ականավոր գործիչներին հիշելու գործընթացը շարունակական կլինի»:*

Լ. Հախվերդյանին նվիրված լիագումար նիստում լսվեց վեց զեկուցում: ԱԻ թատրոնի բաժնի վարիչ, ԳԱԱ թղթակից անդամ, արվ. դ., պրոֆ., Հենրիկ Հովհաննիսյանը *ներկայացրեց «Իր ժամանակի հայ թատրոնի մեկնաբանը» զե-*

** Ներկայացվել է 14. I. 2025 թ., ընդունվել է տպագրության 27. III. 2025 թ.:*

կուցումը: «Լևոն Հախվերդյանը թումանյանագիտության զարգացման շրջադարձային փուլում» բանախոսության հեղինակն էր ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի (ԳԻ) առաջատար գիտաշխատող, բ. գ. դ. Սուսաննա Հովհաննիսյանը*: «Լևոն Հախվերդյան՝ անհատն ու քաղաքացին» վերտառությամբ զեկուցման հեղինակն ԱԻ տնօրենի խորհրդական բ. գ. դ.* Լիլիթ Արզումանյանն *էր: ԱԻ թատրոնի բաժնի գիտաշխատող, արվ. թ., դոցենտ* Գոռ Վանյանը *ներկայացավ «Լևոն Հախվերդյանի դերասանական դիմանկարները» զեկուցմամբ: «Լևոն Հախվերդյանը՝ գիտական ղեկավար և Ուսուցիչ» բանախոսությամբ հանդես եկավ ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ.* Անահիտ Զեյթյանը*: ԱԻ տնօրեն* Աննա Ասատրյանի *զեկուցման թեման էր «Լևոն Հախվերդյանը՝ գիտության կազմակերպիչ»:*

Նստաշրջանի աշխատանքներին մասնակցեցին երիտասարդ արվեստաբաններ Արվեստի ինստիտուտից, Հայաստանի գեղարվեստի պետական ակադեմիայից (ՀԳՊԱ), Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանից (ՃՇՀԱՀ), Երևանի թատրոնի և կինոյի պետական ինստիտուտից (ԵԹԿՊԻ), Կոմիտասի թանգարան-ինստիտուտից (ԿԹԻ), Խ. Աբովյանի անվան հայկական պետական մանկավարժական համալսարանից (ՀՊՄՀ), նաև՝ Ռուսաստանից, Չինաստանից և Լիբանանից: Երկօրյա գիտաժողովի երեք նիստերի ընթացքում ընթերցվեցին քսան զեկուցում, որոնցում ներկայացվեցին արվեստագիտության տարբեր գիտաճյուղեր՝ կերպարվեստագիտություն, երաժշտագիտություն, ճարտարապետության պատմություն, թատերագիտություն և կինոգիտություն:

Լիագումար նիստից հետո գիտաժողովի աշխատանքները շարունակվեցին մասնախմբային նիստերում:

ԿԵՐՊԱՐՎԵՍՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Ուրարտական բրոնզյա կաթսաների գեղարվեստական հարդարման առանձնահատկությունները» զեկուցմամբ հանդես եկավ ԱԻ կերպարվեստի բաժնի գիտաշխատող, արվ. թ. Գայանե Պողոսյանը*: ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ., դոցենտ* Մարտին Հարությունյանի *զեկուցումը կրում էր «Քաղաքային այգիների և պուրակների ճարտարապետական ոճերի, դիզայնի տարրերի, դրանց զարգացման և վերաձևավորման լավագույն մեթոդները» վերնագիրը: Հեռավար ձևաչափով Սուչժոու համալսարանի կերպարվեստի բաժնի հետդոկտորանտ* Անի Մարգարյանը *(Չինաստան, Նանկին) իր զեկուցման մեջ արծարծեց «Հայ վաճառականի հավաքական կերպարը. վաճառական դասի ավանդական հագուստի վերածննդի մեթոդաբանական մոտեցումներ» թեման: ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ.* Մանե Մկրտչյանը *հանդես եկավ «Մարկ Բալակջյան. ստեղծագործական դիմանկար» զեկուցմամբ: «Հին Թիֆլիսի կերպարը Հմայակ Հակոբյանի ստեղծագործության մեջ» վերտառությամբ բանախոսության հեղինակը ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի կրտսեր գիտաշխատող* Արմի-

նե Պետրոսյանն էր: ՀԳՊԱ ասպիրանտ Սյուլ Պեյգանը (Չինաստան) ներկայացավ «Սոցիալիստական ռեալիզմի ազդեցությունը 1950-ական թվականների չինական արվեստի վրա» թեմայով: ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ասպիրանտ Ռուզան Անանյանի բանախոսությունը վերնագրված էր «Ռաֆայել Շիշմանյանի ժանրային ստեղծագործությունների առանձնահատկությունների շուրջ»: ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ. Մերի Կիրակոսյանը հանդես եկավ «Կերպարվեստի հարցերը Պոլսի «Ոստան» հանդեսի էջերում» զեկուցմամբ: «Ֆեմինիստական դիտանկյունը համաշխարհային վիդեոարտի պատմության մեջ» բանախոսությամբ ելույթ ունեցավ ԱԻ սփյուռքահայ արվեստի և միջազգային կապերի բաժնի ասպիրանտ Աննա Սապոժնիկովան (Ռուսաստան-Իսրայել):

ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի բնակելի տների ինտերիերները (20-րդ դար)» զեկուցմամբ հանդես եկավ ԱԻ ճարտարապետության բաժնի կրտսեր գիտաշխատող, արվ. թ. Ռուզաննա Միքայելյանը: ԱԻ ճարտարապետության բաժնի ավագ գիտաշխատող, ճարտ. թ., դոցենտ Արեգ Հասրաթյանը ներկայացրեց «Տեկորի տաճարի V դ. հորինվածքի վերակազմությունը» վերնագրված բանախոսությունը: «Շուշանավանքի վերակազմությունն ու վերականգնման խնդիրները» թեմայով ելույթ ունեցավ ԱԻ ճարտարապետության բաժնի գիտաշխատող, ճարտ. թ. Հրանտ Հովսեփյանը: «Անիի Ս. Աստվածածին և Օշկվանքի Ս. Հովհաննես Մկրտիչ եկեղեցիների որմնաշարերի ճարտարապետական վերլուծությունը» բանախոսությամբ հանդես եկավ ՃՇՀԱՀ-ի դասախոս, ճարտ. թ. Դավիթ Նահատակյանը:

ԵՐԱԺՇՏԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԻ երաժշտության բաժնի ավագ գիտաշխատող, արվ. թ. Լիլիթ Արտեմյանը ներկայացրեց ««Արմենիա» միջազգային փառատոնի դերն ու նշանակությունը միջմշակութային երկխոսության զարգացման գործում» զեկուցումը: «Վարդան Այգեկցու «Ուխտ միայնակեցի ընդ սատանայի» առակը որպես հայ միջնադարյան նվագարանային արվեստի վկայություն» թեման արծարծեց ԱԻ երաժշտության բաժնի ասպիրանտ Տիգրան Դավթյանը: «Միխայիլ Կոկժաևի «Խճանկարներ և որմնանկարներ» դաշնամուրային կվինտետը» բանախոսությամբ ելույթ ունեցավ ԱԻ երաժշտության բաժնի հայցորդ Գոհար Կարապետյանը: ԱԻ երաժշտության բաժնի ասպիրանտ Նարե Ջիլաբոշյանը (Լիբանան) հեռավար ձևաչափով ներկայացրեց «Իզաբել Բայրաքդարյանը՝ Կոմիտասի մեներգերի մեկնաբան» զեկուցումը: ԳԻ հայցորդ Անի Մուշեղյանը հանդես եկավ «Կոմիտասի անձնական գրադարանի գեղարվեստական գրքերի հավաքածուն» բանախոսությամբ:

ԹԱՏԵՐԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԿԻՆՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԵԹԿՊԻ ասպիրանտ Հրաչ Պետրոսյանը ելույթ ունեցավ «Ստեփան Իսահակյանի ստեղծագործության ընդհանուր պատկերը» զեկուցմամբ: «Կինոն քարոզչության զենք. քաղաքական և սոցիալական հաղորդագրությունները

երկրորդ համաշխարհային պատերազմի նախաշեմին կինոմոնտաժի միջոցներով» բանախոսության հեղինակը ԵԹԿՊԻ ասպիրանտ Մանե Բաղդասարյանն *էր:*

Դեկտեմբերի 18-ին ԳԱԱ Նախագահության նիստերի դահլիճում կայացավ ԱԻ կերպարվեստի բաժնի գիտաշխատող, արվ. թ. Գայանե Պողոսյանի «Պատկերագրական առանձնահատկությունները Վանի թագավորության կերպարվեստում» (Երևան, «Գիտություն» հրատ., 2024) գրքի շնորհանդեսը:

Նստաշրջանն անցավ ակտիվ քննարկումների և կառուցողական հարցադրումների մթնոլորտում:

Գիտաժողովի արդյունքներն ամփոփեց և եզրափակիչ խոսքով հանդես եկավ ԱԻ տնօրեն Աննա Ասատրյանը*:*

ՄԵՐԻ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ